ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 25

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով,Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է.

Հաստատել ավագանու թիվ 8 նիստի օրակարգը
1.Օրակարգը հաստատելու մասին
2.Նոր ուղի համայնքի տեղական տուրքերի և վճարների 2020թ դրույքաչափեր սահմանելու մասին:
3.Ամենամյա գույքագրման արդյունքները հաստատելու մասին:
4.Տարեկան բյուջեում հոդվածային փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Ուղի համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Նոր Ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2019թվականի N 26-Ն

ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածի պահանջներով,Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է՝

Նոր ուղի համայնքում 2020թ համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

Բոլոր տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանելիս կիրառվել է 0.5 գործակիցը:

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-իցմինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-իցմինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման

աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ երեսուն հազարդ րամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչհիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝վեց հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տաս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տասներկու հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քսաներկու հազար հինգ հարյուր դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝վեց հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տաս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քսաներկու հազար հինգ հարյուր դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ՝մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ մեկ հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ մեկ հարյուր քսանհինգ հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հիսուն հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝տաս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝տասնհինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝քսանհինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործել ութույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երկու հազար դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումնու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երեք հազար դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երկու հազար դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար- երեք հազար դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երկու հազար դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երկու հազար դրամ

7) Համայնքի տարածքում աղբահանության աշխատանքները իրականացնելու համար տեղական վճար սահմանել,յուրաքանչյուր բնակչից մեկ ամսվա համար 120 դրամ:

7.1 Իրավաբանական անձանցից յուրաքանչյուր ամսվա համար 6530 դրամ:

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝մեկ փաստաթղթի համար՝մեկ հազար դրամ փոխհատուցման վճար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 27

ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով,Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է՝

Հաստատել Նոր ուղի համայնքի համայնքապետարանի ,մանկապարտեզի,գրադարանի և ակումբի 2019թ գույքագրման արդյունքները,համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզի Նոր ուղի

համայնքի ավագանու

2019թվականի դեկտեմբերի 13 N 27 որոշման

ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ 2019Թ

Արարատի մարզի Նոր ուղու համայնքապետարան

Նոր ուղու մանկապարտեզ

	Անվանումը և համառոտ նկարագիրը	Քանակը	Չափման միավոր	գինը	Գնման տարեթիվը
1	հանդերձապահարան	10	հատ	50917	27,09,2010թ
2	Մանկավարժի գրասեղան	2	հատ	12220	27,09,2010թ
3	գրապահարան	2	հատ	12220	27,09,2010թ
4	Խաղալիքների պահարան	2	հատ	11405	27,09,2010թ
5	Աթոռ կիսափափուկ մեծ	2	հատ	4888	27,09,2010թ
6	Մանկական գրասեղան	8	հատ	24440	27,09,2010թ
7	Մանկական աթոռ	20	հատ	17100	27,09,2010թ
8	սպասքապահարան	1	հատ	6610	27,09,2010թ
9	Երաժշտական կենտրոն	1	հատ	0	27,09,2010թ
11	սառնարանToshiba	1	հատ	0	27,09,2010թ
12	Հեռուստացույցի տակդիր	1	հատ	5092	27,09,2010թ
13	գրատախտակ	1	հատ	3062	27,09,2010թ
15	լույսեր	1	հատ	661	27,09,2010թ
17	ջեռուցիչ	2	հատ	18737	27,09,2010թ
18	շերտավարագույր	5	հատ	0	6,08,2010թ
19	Հատակի ծածկոց	20	քմ	0	13,08,2010թ
21	լվացարան	2	հատ	7332	13,08,2010թ
23	աքսեսուարներ	2	հատ	3259	13,08,2010թ
24	զուգարանակոնք	2	հատ	13442	**13,08,2010թ**
29	կրակմարիչ	2	հատ	7500	
30	կաուսեր	1	հատ	91650	16,05,2016թ
31	Նավակ	1	հատ	16640	16,05,2016թ
32	ճոճանակ	1	հատ	82485	16,05,2016թ
33	զսպանակ	1	հատ	82485	16,05,2016թ
34	Նստարան	3	հատ	12220	16,05,2016թ
35	աղյուսան	1	հատ	146640	16,05,2016թ

Անումը

1	էլ. Տաքացուցիչ	հատ	1	0	2.12.2008թ
2	Դահլիճի աթոռներ	45	հատ	192465	09,11,2011թ
3	Աթոռ կիսափափուկ	10	հատ	19858	09,11,2011թ
4	Մեղան բեմի	1	հատ	16803	09,11,2011թ
5	Մեղան խաղասենյակի	2	հատ	18330	09,11,2011թ
6	Բեմի ետնապատի նկար	1	հատ	24440	09,11,2011թ
7	աղբաման	2	հատ	1833	09,11,2016թ
8	Հատակի ծածկոց	20	քմ	14053	26,10,2011թ
9	շերտավարագույր	3	հատ	7638	25,11,2011թ
10	Դինամիկ3595	1	կոմպ	88086	30,07,2014թ
11	կրակմարիչ	2	հատ	7500	20,04,2011թ

12	անկիան	1	հատ	19247	15.06.2015
24	աթոռներ	10	հատ	65170	13.10.2016

3 Նոր ուղու գրադարան

1	Գրադարանային Ֆոնդի գիրք	հատ	1444		
2	ստեղաժ	հատ	5	0	1997թ
3	Աթոռ կիսափափուկ	հատ	2	0	1997թ
5	աթոռ	հատ	1	0	2007թ

4 Նոր ուղու համայնքապետարան

Համայնքի ղեկավարի աշխատասենյակ և հաշվապահություն

	Գրասենյակային շենքը				782183
1	Սառնարան ,,դայվա..	հատ	1	0	20,06,2008թ
2	Գրասենյակային գրասեղան	հատ	3	0	1997թ
3	Համակարգիչ Intel Dual Core E5700	հատ	1	0	01,11,2011թ
4	հայելի	հատ	1		2004թ
5	Պատմենահանող և տպիչ սարք	հատ	1	0	28,03,2011թ
6	Էլ. տաքացուցիչ	հատ	1	0	17,12,2008թ
7	Երկաթյա պահարան	հատ	2	0	1997թ
8	Համակարգիչ Dual Core	հատ	1	0	30,12,2009թ
9	Համակարգչի բլոկ	հատ	1	0	20,04,2013թ
10	Տեռուցիչ մանկապարտեզի	հատ	1	9380	27,09,,2010
11	օդորակիչ	հատ	1	72556	28,08,2013թ
12	աթոռ	հատ	6	0	20,10,2008թ
13	հեռուստացույց	հատ	1	նվիրատվ	**6,12,2009թ**
14	Տնօրենի գրասեղան	հատ	1	13238	30,06,,2009թ
15	Հավաքածու պահարան	հատ	1	2546	30,06,2009թ
17	Հանդերձապահարան հայելիով	հատ	1	40000	30,06,2009թ
19	Հեռուստացույցի տակդիր	**հատ**	**1**	0	1997թ
20	Երկաթյա պահարան	հատ	1	0	1997թ
21	Բջջային հեռախոս	հատ	1	39919	1,03,2017
22	կրակմարիչ	հատ	2	7500	20,04,2011թ
23	Խոտաքաղի սարք	հատ	1	60676	2 .10.2017
25	աթոռ	հատ	6	85540	15.06.15
26	բազկաթոռ	հատ	1	62729	15.06.2015թ
32	համակարգիչ	հատ	1	109369	19.12.2016
34	Սկաներ LASEJET M1132MFP	հատ	1	52371	8.12.2017
	Աշխատակազմի ղեկավար				
27	Երկաթյա պահարան	հատ	1	0	1997թ
28	Գրասենյակային գրասեղան	հատ	1	0	1997թ
29	բազկաթոռ	հատ	1	0	12,04,2008թ
30	Տեռուցիչ մանկապարտեզի	հատ	1	9380	27,09,,2010
31	աղբաման	հատ	1	444	2.12.2008
32	աթոռ	հատ	1	0	2007թ

Աշխատակազմի քարտուղար՝ *Ա. Գևորգյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ N 28-Ն

2019Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է.

Եկամտային մասում ավելացնել Նոր ուղի համայնքում հանդիսությունների սրահի կառուցման համար 38.01.00 գործառնական ՀՀ Պետ բյուջեի կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ 900425002822<<Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին>> հաշվեհամարին 1800.0/հազ.դրամ/ և ուղղորդել ծախսային մասի Հանդիսությունների սրահի կառուցման համար 08.05.01.55 Սուբվենցիա Հանգիստ,մշակույթ և կրոն հաշվեհամարի 5112 հոդվածին 1800.0/հազ.դրամ:
Ճշտված պլան սահմանելով 1800.0 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**